ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-1133-0022 կադաստրային ծածկագրով 0,01762 (զրո ամբողջ մեկ հազար յոթ հարյուր վաթսուներկու հարյուրհազարերորդական) հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողն աճուրդային կարգով օտարելու նպատակով Գավառի համայնքապետարանը հայտարարում է բաց դասական աճուրդ, որը կկայանա 2025թ. դեկտեմբերի 22-ին Գավառի համայնքապետարանի նիստերի դահլիճում/ ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12/, ժամը 11^{00}-ին;

Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 66 000 (վաթսունվեց հազար) ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- Մասնակցի անձնագրի և սոց. քարտի լուսապատճենները.
- Մասնակցության վճարի /2000 ՀՀ դրամ/ անդորրագիրը:

Վճարումը պետք է կատարվի Գավառի համայնքապետարանի 900175101204 հաշվեհամարին:

Աճուրդի մասնակցության հայտը լրացվում է տեղում; Հայտերի ընդունումն ու մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի օրվանից երեք օր առաջ:

Աճուրդում հաղթող է ճանաչվում աճուրդի ընթացքում առավելագույն գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի նախավճարը/ մեկնարկային գնի 50 տոկոսի չափով/ վճարվում է աճուրդի օրը՝ մինչև աճուրդը, Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար կարող են դիմել բոլոր աշխատանքային օրերին 9^{00} - 18^{00} :